ԷՐԻԽ ՖՐՈՄԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գոհար Սարգսյան

Հայ կրոնագիտական միքտը գրեթե չի անդրադարձել 20-րդ դարի նշանավոր փիլիսոփաներից մեկի՝ Էրիխ Ֆրոմի կրոնական հայեցակարգի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Միջգիտակարգային, փիլիսոփայական-հոգեբանական մոտեցումը, կրոնի համալիր մեկնաբանությունը, ինչպես նաև անձի փիլիսոփայական սեփական տեսությունը կազմում են մեծանուն գիտնականի մեթոդաբանական հիմնական բազան: Է. Ֆրոմի հումանիստական հոգեվերլուծության մեջ կենտրոնական տեղ է գրավում հոգևոր կյանքի սոցիալական պայմանավորվածության հայեցակարգը, մարդկային քաղաքակրթության պատմության մեջ կրոնի դերը:

Կրոնական գիտելիքները՝ իբրև հայացքների և գործողությունների համակարգ, մարդուն տալիս են պաշտամունքի օբյեկտ և կողմնորոշում: Այս առումով Է. Ֆրոմի հետաքրքրությունները կրոնի հանդեպ պայմանավորված են նրանով, որ նա կրոնի մեջ տեսնում է հզոր ներուժ, որը կարող է յուրաքանչյուր մարդու մեջ վերածնել ճշմարիտ մարդկայինը:

Կրոնի իր հայեցակարգում Է. Ֆրոմը առաջ է քաշում կրոնական գիտելիքների և ներհոգեբանական գործընթացների փոխկապակցվածությունը և կրոնաբարոյական բովանդակությունը, որի միջոցով մարդը կարող է միավորվել աշխարհի հետ, բավարարել իր ստեղծագործ, դրական դրսևորումներն ու արժեքները: Է. Ֆրոմի կարծիքով կրոնը մեծապես ազդել է նաև մշակույթի վրա՝ կանխելով անգիտակցական մղումների դրսևորումը:

Է. Ֆրոմի գիտական ժառանգությունը հսկայական նյութ է տալիս հետազոտողներին և մեծ հետաքրքրություն առաջացնում, քանի որ ծանոթությունը նրա աշխարհայացքին դառնում է մի յուրահատուկ հանդիպում-շփում մարդկային քաղաքակրթության պատմության, զարմանալի դիտարկում-վերլուծությունների և նուրբ ներզգացողության հետ: Է. Ֆրոմի աշխարհայացքի և տեսության ձևավորման վրա մեծ ազդեցություն են

ունեցել Յ. Բախոֆենի, Լ. Մորգանի աշխատությունները: Նրա ստեղծած տեսության մեջ ի մի է բերվել և վերլուծական արժևորման ենթարկվել մարդկային քաղաքակրթության ծագմանը և զարգացմանը վերաբերող վիթխարի նյութ: Է. Ֆրոմի պատկերացմամբ, գոյություն են ունեցել այնպիսի մշակույթներ, որոնցում հասարակական կյանքի առանցքը կազմել են իգական սեռի պաշտամունքը և բնության ու պտղաբերության հետ անխզելիորեն կապված մայր-աստվածուհու սրբացումը[1]: Այս համատեքստում կարևորվում է նաև այն, որ Է. Ֆրոմը հոգեբանական բացատրության և հոգեվերլուծության է ենթարկում նաև Սուրբ Մարիամ

---

[1] Այդ համատեքստում, անդրադառնալով կրոնի նախնական՝ վաղ հավատալիքների շերտին, Է. Ֆրոմն առանձնացնում է բաբելոնյան Թիամատ մայր-աստվածուհու՝ տիեզերքի կառավարչի առասպելը, ըստ որի մայր-աստվածուհու իշխանությանը սպառնում են նրա որդիները, որոնցից Մարդուկ-Բելը մոր նման ուժեղ էր և ապացուցում է իր ուժը խոսքի միջոցով (բնագրում նշվում է «շրթունքների ուժով»): Այնուհետև, նա հաղթում է մորը և նրա մարմինը երկու մասի բաժանելով՝ ստեղծում երկինքն ու երկիրը, ինչն արդեն նշանակում է, որ Մարդուկ-Բելը, ի տարբերություն իգական նախասկզբի, ձեռք է բերում նոր որակներ՝ բնության ավիրման և նորի արարման: Նա դա անում է հզոր մտքի և խոսքի մոգական ուժով: Է. Ֆրոմը քողարկված առնչություններ է տեսնում բաբելոնյան այս առասպելի և աստվածաշնչյան զրույցների միջև, որոնցում արդեն անհետանում է կանացի աստվածության գերազանցությունը, և արարչագործությունը սկսվում է մոգական խոսքից. արական նախասկզբի արարումը կրկնվում է, և արդեն կինն է ստեղծվում տղամարդուց: Աստվածաշնչյան զրույցը կարծես տղամարդու «հաղթական երգն» է պարտված կնոջ դեմ: Աստվածաշնչյան զրույցները Է. Ֆրոմը մեկնաբանում է նաև մարդկության պատմության սկզբնավորման համատեքստում՝ նկատելով, որ մարդկության պատմությունն սկսվում է անհնազանդության դրսևորումից. Աստված արգելեց ուտել պտուղը, և կինն առաջինը կարողացավ ասել՝ ոչ: Դրա հետևանքով մարդը դուրս եկավ չանհատականացված, մինչգիտակցական, մինչպատմական վիճակից, որը կարելի է համեմատել մոր արգանդում գտնվող պտղի հետ: Այդ անհնազանդությունն էլ մարդուն դուրս բերեց դրախտից և ստիպեց քայլել պատմության ճանապարհով: Նա իրավունք չունի վերադառնալու, իրականում նա չի էլ կարող վերադառնալ, քանի որ մարդու մեջ զարթնել է ինքնագիտակցությունը՝ իրեն իբրև առանձին, բնությունից անջատ էակի ընկալելու հնարավորությունը: Ազատության այս առաջին քայլը հին հույների մոտ ներկայանում է այլ խորհրդանշանով՝ Պրոմեթևսի կերպարով, որն անհնազանդ գտնվեց աստվածների առաջ, առևանգեց կրակը և տվեց մարդուն՝ սկիզբ դնելով մարդկության քաղաքակրթության: Տե՛ս **Фромм Э.,** Догмат о Христе, Медицина и этическая проблема современного человека, М., 1998, ст. 108-109.

Աստվածածնի կերպարը՝ համոզված, որ թեև պատմական անցյալի վերադիտարկումը բարդ և ծավալուն գործընթաց է, այնուամենայնիվ, միայն այդ կերպ է հնարավոր հասնել մարդկության կրոնական պատկերացումների հոգեվերլուծական ըմբռնմանը: Նա հենվում է մեթոդաբանական այն մոտեցման վրա, որ կրոնական թեմաներում ամրակայված պատկերացումներն ու գաղափարները նույնպես ստանում են հոգեբանական բացատրություն և նշանակություն: Կրոնական աշխարհայացքի զարգացման հետ փոխվում են նաև կրոնական պատկերացումները և այս կամ այն կերպարի կրոնական արժևորումը[1]:

---

[1] Որպես օրինակ կարելի է դիտարկել այն, որ Նոր կտակարանում Մարիամը բնավ վեր չի կանգնած սովորական մարդուց: Ինչքան զարգանում է քրիստոնեությունը, այնքան Մարիամի մասին պատկերացումները ձեռք են բերում չափազանց ուժեղ նշանակություն: Է. Ֆրոմն անդրադառնում է նաև Հայր Աստծո հանդեպ Հիսուսի պատկերացումների փոփոխությանը: Փոխվում է ոչ միայն որդին, այլև հայրը: Խիստ հոր կերպարը վերածվում է մորը ապաստան տվողի և պաշտպանողի, իսկ երբեմնի խռովարար, հետո արդեն տառապյալ որդին վերածվում է փոքր երեխայի: Հրեաների Հայր Աստծո կերպարի տակ (Հայր Աստվածը ձեռք է բերում դոմինանտ ազդեցություն Մերձավոր Արևելքի մայրական աստվածությունների դեմ մղած պայքարում) վերստին հանդես է գալիս Մեծ Մոր աստվածային կերպարը, որն էլ դառնում է դոմինանտ միջնադարյան քրիստոնեության մեջ: 4-րդ դարից սկսած՝ մայրական աստվածությունը, հանձին սուրբ կույս Մարիամի պաշտամունքի, բացահայտ կարևոր նշանակություն է ձեռք բերում արևմտյան քրիստոնեության մեջ: Արդեն 431 թ. Նեստորի դեմ ուղղված որոշումներում Մարիամը ոչ միայն Հիսուսի մայրն էր, այլև Աստծվածամայր է. հենց 4-րդ դարի վերջից էլ սկսվում է Մարիամի պաշտամունքը, նրան դիմում են աղոթքներով, նրա քանդակներն ու արձանները մեծ տարածում և նշանակություն են ձեռք բերում: Նա ընկալվում է որպես բարեգթություն շնորհող: Մանուկ Հիսուսին գրկած Մարիամը դառնում է միջնադարյան կաթոլիկության խորհրդանիշը: Պատմական զարգացման ընթացքում եկեղեցին դառնում է աստիճանակարգված կազմակերպություն, մի սրբազան ինստիտուտ, որն ավելին էր, քան նրա անդամների պարզ հանրագումարը: Եկեղեցին փրկության միջնորդն էր. հավատացյալներ դառնում են երեխաները, իսկ ինքը՝ եկեղեցին՝ Մեծ Մայրը տալիս է ապագայում երանություն ձեռք բերելու վստահությունը: Նշանակալի է, որ Մարիամի պաշտամունքի մեջ վերածնվում-կենդանանում է մայր աստվածության գաղափարը, մայր աստվածությունը վերածնվում է, դառնում անկախ՝ շնորհիվ Հայր Աստծուց իր տարանջատման: Կերակրող Մարիամի վերաբերյալ կոլեկտիվ պատկերացումների բուն էությունը հնարավոր է հասկանալ միայն հոգեվերլուծական կլինիկական հետազոտություններով, որոնք ցույց են տալիս, որ կերակրող Աստվածամոր կերպարը անհատի հոգևոր կյանքում կարևոր դեր է

Է. Ֆրոմի փիլիսոփայական-հոգեբանական աշխարհայացքն առավել ամբողջական պատկերացնելու համար նախ և առաջ պետք է առաջնորդվել այն հանգամանքով, որ նրա հիմնական թեզիսն այն է, թե պատմական էվոլյուցիայի ընթացքում մարդիկ կորցրել են կապը բնության, միմյանց հետ, օտարացել ու մեկուսացել են բնությունից ու իրարից, սակայն ձեռք են բերել և զարգացրել են վառ երևակայություն, ողջախոհություն, դատողական մտածողություն, կանխատեսման և երևակայելու ընդունակություններ: Ըստ Է. Ֆրոմի՝ մտածելու կարողությունը ունի երկու կողմ՝ բարիք և անեծք, որոնք էլ մարդուն թույլ են տալիս գոյատևել և մղում են «գոյաբանական (էկզիստենցիալ) երկփեղկվածության» (դիխոտոմիաների) լուծմանը. դրանց պատասխանը մարդը չունի, քանի որ դրանց էությունը արմատավորված է հենց կեցության մեջ: Արժեքների էկզիստենցիալ մեկնաբանությունը, վարքի նորմերն ու կողմնորոշումները Է. Ֆրոմի գաղափարախոսության կենտրոնական հիմնախնդիրներն են:

Մտածողության երկակիությունը նախ և առաջ սկիզբ է առնում նրանից, որ մարդը գիտակցում է իր մահվան անխուսափելիությունը, ինչը ներազդում է նրա կյանքի վրա, սակայն մարդու իմաստնությունը ոչ թե մահվան, այլ կյանքի մասին խորհրդածության մեջ է: Մարդը ողջ էությամբ ձգտում է հերքելու մահվան անխուսափելիությունը, ինչն անում է մահից հետո գոյություն ունեցող կյանքի հանդեպ հավատով:

խաղում նաև այն առումով, որ այն ամփոփում է ներում և թողություն շնորհող, երեխային հանգստացնող, ցավերը փարատող մայրական էությունը, որի լավագույն դրսևորումներն են մոր կրծքին հանգչող մանուկ Հիսուսի և հետագայում տառապող Հիսուսի կերպարները, և այդ երկու կերպարներն էլ փափագում են սեր, հանգստություն և ներում: Է. Ֆրոմը ուշադրություն է հրավիրում նաև Շանդոր Ռադոյի այն հետաքրքիր դիտարկմանը, որը բացահայտում է կերակրող մոր կերպարի պաշտամունք դառնալու հոգեբանական ենթահիմքը. այն կապվում է քաղցից մեռնելու նախնական վախերի հետ, որոնք հաղթահարվում են հենց կրծքով կերակրելու փաստով: Հոգեբան Շանդոր Ռադոն մայրական աստվածության կենսունակության հիմքում դնում է հենց քաղցից փրկվելու, ինչպես նաև բավարարություն ստանալու հանգամանքները, որոնք կարևոր դեր են խաղում անհատի հոգեբանական վիճակի ձևավորման գործում: Եվ պատահական չէ, որ մանկանը կերակրող Մարիամի կերպարը դարձավ հզոր կրոնական համակարգի և վերջինիս միջոցով նաև արևմտյան մշակույթի մի ամբողջ դարաշրջանի խորհրդանիշը: Մանրամասն տե՛ս **նույն տեղում,** էջ 69-72:

Կարևոր հիմնադրույթ է նաև այն, որ մարդու երջանկությունը կախված է իր նմանների հետ միավորվելուց: Այսպիսով, երկրորդ դիխոտոմիան մարդու միայնակության և մարդկանց հետ միասնության կոնֆլիկտի լուծման անհնարինություն է:

Մարդու գոյաբանական պահանջմունքներից է նաև սերը, որը ենթադրում է անմիջական մասնակցություն այլ մարդու կյանքին, այլ մարդու հետ սերտ կապ և միասնություն. սիրո մեջ երկուսը դառնում են մեկ, սակայն պետք է կարողանան նաև հարազատ մնալ սեփական ինքնությանն ու անհատականությանը: Է. Ֆրոմը առանձնացնում է սիրո էությանը բնորոշ չորս բաղադրիչ՝ հոգատարություն, պատասխանատվություն, հարգանք և գիտելիք: Մարդու հիմնական արժանիք նա հռչակում է սիրելու ունակությունը՝ սերը դիտարկելով իբրև կեցության չափանիշ, մարդկանց տարանջատումը վերացնող, մարդու և աշխարհի ներդաշնակությունը վերականգնող միջոց: Նա սերը դիտարկում է իբրև բարձրագույն հումանիստական արժեք և քննադատում է Զ. Ֆրոյդի սեքսուալ-կենսաբանական բնութագրումներն ու դրանց գերագնահատումը: Եթե Զ. Ֆրոյդը սիրո ֆենոմենը բացատրում էր գերազանցապես ֆիզիոլոգիայի տեսանկյունից, ապա Է. Ֆրոմի կարծիքով սերը պետք է իմաստավորել մարդաբանական և գոյաբանական չափումների տիրույթներում: Նրա ներկայացրած «սիրո մեկնաբանությունը» մոտենում է քրիստոնեական *«սիրի՛ր մերձավորիդ»* կողմնորոշմանը, որում առաջին պլան է մղվում ոչ թե ապրանքային-սպառողական «Ես-ը», այլ մարդկային ճշմարիտ ինքնությունը, անձի ներքին հնարավորությունների ինքնաիրացումը: Արդյունքում, այդ ամենի ընդհանրացմամբ Է. Ֆրոմը հանգում է այն հետևությանը, որ «Սերը ուրիշ մարդու ներաշխարհի մեջ ակտիվ ներթափանցումն է, որի դեպքում իմացության կիրքը չափավորվում է այդ մարդու հետ մեկ միասնություն լինելու ցանկությամբ: Մարդու մասին ամբողջական գիտելիք ունենալու միակ ճանապարհը գործուն սերն է, որը վեր է մտքից և ցանկացած խոսքերից: Սերը ինքնամոռաց խորասուզում է ուրիշ մարդու էության մեջ կամ էլ՝ սեփական էության մեջ»[1]:

Հոգեբանը կարող է աշխարհին ցույց տալ, թե ինչ **չէ** մարդը, սակայն չի կարող ասել, թե **ինչ** է մարդը, այսինքն՝ յուրաքանչյուր մարդ առանձին: Մարդու հոգին, մարդկային անհատականության բացառիկությունը

---

[1] **Նույն տեղում,** էջ 163:

հնարավոր չէ ճանաչել այնչափ, որչափ մենք այն ընդունում ենք, դրա համար էլ հոգեբանության հիմնական նպատակը ժխտողական (նեգատիվային) մոտեցումն է, այսինքն՝ պատրանքների և իրականության աղավաղված ընկալման մերժումը և ոչ թե հաստատված գիտելիքը այն մասին, թե ինչ է մարդը: Սակայն կա մարդու ճանաչողության, մարդու առեղծվածն ընկալելու այլ ուղի՝ չիմացության ուղին, չիմացության, բայց սիրո ուղին:

Սերը մարդու ճանաչողությանը տանող դժվար ճանապարհ է: Եթե սիրելու անկարող մարդը փորձում է թափանցել մարդկային էության գաղտնիքների մեջ, ապա դա առավելապես դառնում է մարդու նկատմամբ իշխանություն հաստատելու ձգտում, իշխանություն, որը ստիպում է մարդուն զգալ, մտածել և անել այն, ինչ ինքն է ուզում: Այս երևույթի ծայրահեղ դրսևորումը սադիզմն է՝ ցանկությունը ստիպելու մարդուն տառապելու, քանի որ այս պարագայում սիրած էակը ընկալվում է որպես **«իր»,** որի տերը սիրողն է և ցանկացած պահի կարող է այն ոչնչացնել: Սադիզմն ու այլասերումը (մարդու հանդեպ վերաբերմունքում) անհույս և ողբերգական փորձ են՝ ճանաչելու մարդուն[1]:

Հենց սիրելու կարողությամբ էլ առանձնանում են հոգեպես առողջ մարդիկ, որոնք գոհանում են իրենք իրենցով և շատ փոքր ցանկություն ունեն համապատասխանելու ամբոխին: Նրանք չեն ձգտում ազատվելու սեփական «ես»-ից, քանի որ կարիք չունեն սահմանափակելու իրենց ազատությունը: Հակառակ նրանց՝ նևրոզով տառապողները ձգտում են մոտ լինելու ավելի ուժեղ մարդկանց, արմատանալու հասարակական-քաղաքական ինստիտուտներում (ազգային, կրոնական, մասնագիտական):

Ժամանակակից քաղաքակրթական հիմնախնդիրները վերլուծելիս՝ Է. Ֆրոմն ուշադրության կենտրոնում է պահում մարդուն՝ նրան դիտարկելով գոյության դրսևորումների բազմազանության մեջ: Այդ համատեքստում էլ մարդու արժեհամակարգը դիտվում է որպես գոյաբանական պահանջմունք, ինչպես, օրինակ, ճանապարհային քարտեզը, որն օգնում է ճիշտ կողմնորոշվելու աշխարհում և գործելու նպատակաուղղված և հետևողականորեն: Մարդու կենսական գլխավոր շահը պիտի լինի հենց արժեքային համակարգի և ճիշտ կողմնորոշման պահ-

[1] Տե՛ս **նույն տեղում**, էջ 162-163:

պանումը, սեփական անձի գիտակցումը: Մարդկության զարգացման նպատակն այնպիսի իդեալների հասնելն է, ինչպիսիք են գիտելիքը, եղբայրական սերը, տառապանքների թեթևացումը, անկախության և պատասխանատվության ձեռքբերումը: Այս իդեալները արևելյան և արևմտյան մշակույթների, բոլոր մեծ կրոնների բարոյական միջուկն են՝ չնայած տարբեր կրոնական համակարգերում դրանց դրսևորումների տարբերությանը. օրինակ՝ Բուդդան կարևորում էր տառապանքների թեթևացումը, Հիսուսը՝ եղբայրական սերը, մարգարեները՝ գիտելիքի և արդարության հաստատումը:

Է. Ֆրոմը քննադատում է մարդու մասին այն տեսությունը, որը մարդու էությունը **համարում** է կենսաբանական և հոգեբանական ուժերի հանրագումար: Նա համոզված է, որ ներկայում մարդու էության վերջնական բնութագիրը հնարավոր չէ տալ, որովհետև մարդու էվոլյուցիան դեռ շարունակվում է: Կարևորելով հատկապես 19-20-րդ դարերի մարդու բարոյական խնդիրները՝ Է. Ֆրոմը 19-րդ դարի մարդու համար առանձնացնում է 3 գլխավոր «մեղքեր»[1]: Նախ՝ մարդու կողմից մեկ այլ մարդու **շահագործումն** է բոլոր առումներով՝ և՛ ֆիզիկական, և՛ բարոյական ու հոգեբանական: Մարդը մեկ ուրիշի համար դառնում է «սնունդ» այն առումով, որ իր կենսաէներգիայով սնում է նրան: Մարդը մոռանում է մարդկային տեսակի հավասարության մասին, իսկ հավասարությունը բոլորի համար ընդհանուր մի վիճակ է, երբ մարդու ձգտումները կենտրոնացած են իր վրա, նա ձգտում է իր նպատակների իրականացմանը՝ անկախ սեռից, տարիքից, մաշկի գույնից: Հավասարության հումանիստական ըմբռնումը կարևորում է նաև մարդկանց տարբերությունները. մարդիկ ազատ են միայն այն ժամանակ, երբ կարողանում են ընկալել իրենց տարբերությունը և, այդուհանդերձ, շփվել մեկը մյուսի հետ հավասարի պես:

Շահագործման գերդրսևորումն էլ հանգեցնում է 19-րդ դարի բարոյական երկրորդ խնդրին՝ **ավտորիտարիզմին**. իշխանության գլուխ կանգնած մարդիկ իրենց բացառիկ իրավունք են վերապահում իշխելու մյուսներին և նրանց համար սահմանափակումներ մտցնելու (այդպիսին է եղել նաև Հոր իշխանությունը զավակների վրա): Նման հասարակության մեջ անհատը իրեն զգում է ոչ թե որպես ակտիվ սուբյեկտ, ոչ թե իր աշխարհի կենտրոնն ու իր կյանքի արարողը, այլ լոկ մի աննպատակ իր,

[1] Մանրամասն տե՛ս **նույն տեղում,** էջ 145-147:

որին կառավարում են նույնիսկ իր սեփական գործողություններն ու իր ստեղծած իրերը (այդպիսի իրականության օրինակ է ատոմային ռումբը):

19-րդ դարի համար գլոբալ հիմնախնդիր է նաև **ագահությունը**, որն առավել ընդգրկուն ձևով դրսևորում է ստանում միջին խավի շրջանում: Նյութականի գերկարևորումը, կուտակելու, հարստանալու ձգտումը նպաստում են եսասիրական (էգոիստական) անհատականության զարգացմանը՝ հանգեցնելով *«իմ փունն իմ ամրոցն է»* և *«իմ սեփականությունն անձեռնմխելի է»* բանաձևումներին: 19-րդ դարում տնտեսությունը հենվում է սպառման գաղափարի վրա: Մարդիկ հայտնվել են *«սպառում հանուն սպառման»* փակ շրջանի մեջ, երբ 8 ժամ աշխատում են՝ սպառելով իրենց ուժերը, որպեսզի հետո սպառեն աշխատանքի արդյունքը: Մարդը խոնարհվում է իր իսկ ձեռքով ստեղծած իրերի առջև՝ ինքն իրեն համոզելով, որ իրերն ավելի կարևոր են, քան մարդը: Ու թեև 19-րդ դարի մարդը չի խոնարհվում և զոհեր չի մատուցում հեթանոսական կուռքերին՝ ըստ նախնյաց կրոնի, սակայն խոնարհվում ու երկրպագում է արտադրական ապրանքներին, ձեռք բերած նյութական բարեկեցությանն ու հաջողությանը: Ոմանք նույնիսկ փորձում են միավորել կրոնն ու մատերիալիզմը՝ կրոնը դարձնելով հաջողության հասնելու միջոցներից մեկը: Այդ ամենի հետևանքով մարդն սկսում է ձանձրանալ, իրեն զգում է ամայացած ու դժբախտ: Ըստ Է. Ֆրոմի՝ ձանձրույթը հենց այն մեծագույն տանջանքն է, որից ազատվելու համար էլ մարդը կառչում է դատարկ ու անիմաստ բաներից՝ մոռանալով նույնիսկ առաքինության մասին: Գիտնականը հետաքրքիր ձևակերպմամբ է ներկայացնում իր այս մոտեցումը. «Երբ ես փորձում եմ պատկերացնել, թե ինչ է դրախտը, ապա այն ինձ ներկայանում է իբրև մի վայր, ուր իշխում է հավերժական ձանձրույթը»[1]: 19-րդ դարին բնորոշ այս հիմնախնդիրները ժամանակակից մարդը, թվում է, հաղթահարել է, սակայն դրանք հետագա ժամանակները նույնպես կարող են բնորոշել: Յուրաքանչյուր սերունդ և դարաշրջան առանձնանում են իրենց խնդիրներով ու ճգնաժամերով:

Ժամանակակից մարդու բարոյահոգեբանական հիմնախնդիրների հաղթահարման համար Է. Ֆրոմն առաջ է քաշում մի քանի հիմնական դրույթներ: Նա համոզված է, որ մարդու բարոյական նկարագրի վերակառուցման և վերափոխման միջուկը առաջին հերթին պետք է դառնա

---

[1] Տե՛ս **նույն տեղում**, էջ 153:

այն գաղափարը, որ մարդն իր չէ, և եթե փորձում են նրան իր դարձնել, ապա դա մեծագույն վնաս է հենց մարդու համար: Իրերը կանխատեսելի են, մարդը՝ ոչ, իրերն ինքնակամ չեն, մարդը կամք ունի, իրերը չեն կարող արարել, մարդը հենց դրա համար է ստեղծված: Ահա հենց այս համոզմունքը պետք է մարդուն առաջ մղի: Բարոյահոգեբանական ճգնաժամի հաղթահարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդիկ փոխեն իրերի վերաբերյալ իրենց և ուրիշների պատկերացումները, հաղթահարեն անտարբերությունն ու օտարումը բնությունից և միմյանցից, և, ամենակարևորը, դառնան ստեղծագործ էություն, ստեղծեն բարիք՝ հաջորդ սերնդին գեղարվեստական պատկերների և իդեալների միջոցով փոխանցելով իրենց փորձը:

Այսպիսով, Է. Ֆրոմի ուսմունքն ամբողջությամբ ուղղված է մարդկային գոյության պայմանների, մարդու նկարագրի բարոյական նորոգմանն ու վերափոխմանը: Հասարակության հոգեվերլուծության գործընթացը նա սկսում է մարդու «բուժումով», հասարակության սոցիալ-քաղաքական փոփոխությունները բխեցնում է հենց մարդու նկարագրի վերափոխումից՝ այդ ամենի հիմքում տեսնելով մարդու կենսական ներուժի, ներքին հնարավորությունների նպատակային իրացումը[1]:

Է. Ֆրոմն անդրադառնում է նաև հույսի ֆենոմենին՝ այն համարելով կյանքի կառուցվածքի ներքին տարր: Ըստ նրա՝ հույսը մարդկային ոգու դինամիկան է, ներքին պատրաստվածություն, ինչ-որ բանի սպասում: Փիլիսոփայության մեջ հույսը համարվել է թե՛ բարիք (Սպինոզա), որն անհրաժեշտ է մարդու գոյության համար, թե՛ չարիք. Նիցշեն, օրինակ, հույսը քննում է դիցաբանական համատեքստում՝ այն համարելով չարիքներից նվազագույնը, որը մարդը շփոթում է գալիք երջանկության հետ՝ չգիտակցելով, որ այն չարիք է[2]: Ի տարբերություն նման մեկնաբանությունների՝ Է. Ֆրոմը հույսը համարում է մարդու գոյության համար

---

[1] Տե՛ս **Лейбин В. М.,** Психоанализ и философия неофрейдизма, М., 1977, ст. 236-237.

[2] Այս գաղափարը կարելի է գտնել նաև հունական դիցաբանության մեջ. երբ Պանդորան բացում է արգելված արկղը, այնտեղից դուրս են սողում բոլոր դժբախտություններն ու աղետները, բացի մի չարիքից, որը չի հասցնում դուրս գալ, քանի որ Զևսի հրամանով արկղը փակվում է: Արկղում մնացած այդ չարիքը հույսն էր, որը Զևսը տվեց մարդուն, որպեսզի նա, չնայած իր բոլոր տանջանքներին ու դժվարություններին, չհեռանա կյանքից:

անհրաժեշտ տարր, որը ոչ թե պասիվ սպասում է, այլ որոշակի փոփոխությունների համար պատրաստվածություն, և հանգում է այն մտքին, որ մարդը **homo esperans** (հույս տածող) է: Մարդու ճանաչողության հիմնախնդիրը զուգահեռներ ունի Աստծո ճանաչողության հիմնախնդրի հետ. ժխտողական աստվածաբանությունը պնդում է, որ Աստծո մասին որևէ հաստատ դատողություն չկա. Աստծո մասին միակ հաստատուն գիտելիքն այն է, թե Աստված ինչ **չի հանդիսանում:** Այս միտքը կարելի է ձևակերպել Մայմոնիդի խոսքերով՝ «Ինչքան շատ եմ իմանում, թե ինչ չի հանդիսանում Աստված, այնքան շատ եմ իմանում, թե ինչ է Աստված»: Կամ, ինչպես նկատել է Մայստեր Էկխարտը, մարդը չի կարող իմանալ, թե ինչ **է** Աստված, բայց կարող է հստակ պատկերացնել, թե Աստված ինչ **չէ**[1]**:** Այդ առումով Է. Ֆրոմը խիստ կարևորում էր կրոնի դերն ու ազդեցությունը մարդու կյանքում, քանի որ կրոնտ աշխարհի հետ միասնության, կապվածության զգացում է, սիրո և ստեղծագործ աշխատանքի վրա հիմնված չօտարված աշխարհընկալում: Նա անդրադառնում է Աստծո հիմնահարցի կրոնաբարոյական բովանդակությանը՝ կրոնը դիտարկելով հասուն մարդու հոգեկան-հոգևոր տիրույթում: Է. Ֆրոմը քննում է ժամանակակից տեխնոլոգիական հասարակության կրոնական ավանդույթները՝ նկատելով, որ դրանք այսօր ճգնաժամ են ապրում: Ըստ նրա՝ հավատը դարձել է մակերեսային և նյութական, քանի որ այսօր երկրպագության օբյեկտ հաճախակի դառնում են աշխարհիկ ինստիտուտները, իշխանական կառույցները, սիմվոլները: Ժամանակակից մարդը կրոնում փնտրում է փրկություն միայնությունից ու օտարումից, սակայն ավելի է օտարում ինքն իրեն՝ հանգելով նույնիսկ «կռապաշտության»: Է. Ֆրոմի կարծիքով «կռապաշտությունը» լայն իմաստով նյութապաշտություն է, խոնարհում, երկրպագություն առաջնորդներին, իշխանություններին, արտադրությանը, օրենքներին, մարդու պատրաստած առարկաներին[2]: Կարելի է ասել, որ Է. Ֆրոմը «կռապաշտությունը» նույնացնում է օտարման հետ, որովհետև որևէ կուռքի խոնարհումը մարդուն օտարում է իր սեփական ուժերից, հնարավորություններից, և մարդն իր արժանիքները իրենից տարածում է երկրպագության առարկայի վրա: Մարդը չպետք է ամայացնի ինքն իրեն՝ տալով Աստծուն իր բոլոր լավ

---

[1] Տե՛ս **Фромм Э.,** Догмат о Христе, ст. 164.

[2] Այս մասին մանրամասն տե՛ս **նույն տեղում**, էջ 147:

հատկանիշները, այլ պետք է փորձի ինքն իրացնել իր հնարավորությունները. ահա սա է այն ընտրությունը, որ Է. Ֆրոմը տալիս է մարդուն[1]:

«Փախուստ ազատությունից» գրքում Է. Ֆրոմը վեր է հանում բուրժուական հասարակության զարգացմանն ուղեկցող հակասությունները, սոցիալ-տնտեսական գործոնները, որոնց ազդեցությամբ մարդը, ընդլայնելով իր ազատության ոլորտը, միաժամանակ ընկնում է դրա ծանրության տակ, աստիճանաբար ի հայտ է գալիս խզում կրոնի հետ, ավանդական հավատալիքների հետ, և հանկարծ մարդը բացահայտում է, որ ինքը հեռացել է բնությունից, իր աշխատանքի արդյունքներից և ինքն իրենից: Այդ ամենը հաղթահարելու համար պետք է ձևավորել հումանիստական հասարակություն, որը պետք է հենվի հումանիտար էթիկայի, նոր արժեքների և համընդհանուր սիրո վրա: Օտարման հաղթահարումը, անձի ունակությունների զարգացումը հնարավորություն է ստեղծում հասնելու հումանիզմի զարգացման, իսկ հումանիստական հոգեվերլուծությունն էլ նպաստելու է մարդու գիտակցության մեջ քննադատական տարրերի առաջացմանը[2]: Կրոնը Է. Ֆրոմին հետաքրքրում է հենց այնքանով, որքանով այն կարող է ծառայել որպես հումանիզմի զարգացման աղբյուր, անձի բարձր որակներն ու արժանիքները բացահայտող միջոց: Կրոնում նա տեսնում է հզոր ուժ, որն ունակ է արթնացնելու և զարգացնելու յուրաքանչյուր մարդու մեջ մարդկային լավագույն որակները: Լինելով մտքի դրսևորում՝ կրոնը թույլ է տալիս մտորել ամենաբարձր արժեքների մասին, այն դառնում է հոգեկան հենարան՝ բարոյական ճգնաժամերը կանխարգելելու համար:

Կրոնը մեծ ծառայություն է մատուցել նաև մշակույթին, քանի որ նպաստել է անգիտակցական մղումների կասեցմանը: Մշակութաբանական մտորումները Է. Ֆրոմին հանգեցնում են կրոնի հումանիստական ներուժի, կրոն-հասարակություն հարաբերությունների ներդաշնակման հիմնահարցին, որոնց ընդհանրացմամբ էլ նա անձի և հասարակության վերաբերյալ ուսմունքի հիմքում դնում է հոգեվերլուծությունն իբրև օժանդակ գիտակարգ: Եթե կրոնի նպատակը հոգու փրկությունն է, ապա հոգեվերլուծությունը բուժում է հոգին, և Է. Ֆրոմն իրավացիորեն փաստում է կրոնական գաղափարների և պատկերացումների հոգեբանական

---

[1] Տե՛ս **նույն տեղում**, էջ 153:

[2] Մանրամասն տե՛ս **Фромм Э.,** Бегство от свободы, М., 2008, ст. 155-156.

նշանակալիությունը մարդու բարոյական նորոգման և հոգևոր վերածնման գործում: Այդ հիմքի վրա էլ նա պնդում է, որ անձի հոգեկան առողջությունը կախված է նրա բարոյական որակներից, և եզրակացնում, որ «Բժիշկները և բժշկություն ուսանողները, որոնք պայքարում են հիվանդության, ֆիզիկական ցավի, ֆիզիկական ախտանշանների դեմ, պարտավոր են հատուկ ուշադրություն դարձնել հոգեկան ցավերի և հոգեկան ախտանշանների հարաբերակցությանը»[1]:

Սակայն Է. Ֆրոմի համար կրոնը բացառապես դրական ֆենոմեն չէ: Նա ցույց է տալիս, որ տարբեր կրոնական համակարգերում զարգանում են նաև բացասական միտումներ, որոնք քայքայում են մարդուն և բնությունը: Կրոնը վտանգավոր է նաև այն առումով, որ վարժեցնում է մարդուն հավատալու պատրանքներին, ամայացնում և աղքատացնում է քննադատական մտածողությունը՝ խանգարելով մտքի ամբողջական կիրառմանը: Է. Ֆրոմի կրոնների ուսումնասիրությունը բացահայտում է 20-րդ դարի կառավարման տոտալիտար համակարգերի ի հայտ գալու ակունքներն ու պատճառները: Մարդու բնազդային մղումը՝ խոնարհվելու կրոնական բարձրագույն ուժերին, տեղափոխվում է դեպի աշխարհիկ օբյեկտներն ու իշխանությունները:

Այսպիսով, կարող ենք վստահաբար փաստել, որ Է. Ֆրոմի հասարակական-փիլիսոփայական դիտարկումները կրոնի վերաբերյալ մշտապես արժանի են ուսումնասիրության, ինչը կնպաստի հումանիզմի զարգացմանը, թույլ կտա նորովի մոտենալ ժամանակակից քաղաքակրթական խնդիրներին, քանի որ նրա դիրքորոշումն այն էր, որ առողջ հասարակության և ճշմարիտ հումանիզմի հաստատման համար կրոնը պետք է փիլիսոփայորեն իմաստավորվի և նպաստի մարդու հումանիստական զգացումների և կենսահաստատ կողմնորոշման արթնացմանը: Է. Ֆրոմ-գիտնականի գիտական ժառանգությունը իր ներսում կրում է մարդու մեջ առկա լույսի, բարու և ճշմարտության ներուժը:

Բանալի բառեր՝ *հոգեվերլուծություն, մայր աստվածուհի, ավտորիտար և հումանիստական կրոններ, էկզիստենցիալ դիխոտոմիա, օտարում, գոյաբանական պահանջմունքներ (սեր, հույս):*

---

[1] **Фромм Э.,** Догмат о Христе, ст. 145.

ЭРИХ ФРОММ О ВЗАИМОСВЯЗИ РЕЛИГИОЗНОГО ЗНАНИЯ И ПСИХОЛОГИИ

Гоар Саргсян

Ключевые слова: *психоанализ, богиня-мать, авторитарные и гуманистические религии, экзистенциальная дихотомия, отчуждение, онтологические потребности (любовь, надежда).*

Статья посвящена рассмотрению особенностей религиозной концепции одного из знаменитых философов 20-ого века Эрих Фромма. Междисциплинарный, философско-психологический подход, комплексная интерпретация религии, а также собственная философская теория личности составляют основную методологическую базу ученого. Центральное место в гуманистическом психоанализе Фромма занимает концепция о социальной обусловленности духовной жизни, значения религии в истории человеческой цивилизации. Религиозное знание как система взглядов и действий, дает человеку объект поклонения и ориентации. В этом смысле интерес Фромма к религии связан с ее мощным потенциалом, который способен в каждом человеке оживить все истинно человеческое. В своей концепции о религии Фромм выдвигает взаимосвязь религиозного знания и внутрипсихологический процессов, а так же их религиозно-нравственное содержание, посредством чего человек сможет объединиться с миром, удовлетворить его творческие, позитивные проявления и ценности. По мнению его религия так же сильно повлияла на культуру, предотвращая проявления бессознательных побуждений.

ERICH FROMM ON INTERCONNECTION OF RELIGIOUS KNOWLEDGE AND PSICHOLOGY

Gohar Sargsyan

Keywords: *psychoanalysis, mother goddess, authoritarian and humanistic religions, existential dichotomy, alienation, ontological needs - love, hope.*

The article is devoted to the study of the features of the religious concept of one of the famous philosophers-psychoanalysts of the 20th century, Erich Fromm. An interdisciplinary philosophical and psychological approach, a comprehensive interpretation of religion, as well as his own philosophical theory of personality constitute the main methodological basis of the scientist. The concept of the social conditioning of spiritual life, the importance of religion in the history of human

civilization are central to Fromm's humanistic psychoanalysis. Religious knowledge, as a system of views and actions, gives a person an object of worship and orientation. In this sense, Fromm's interest in religion is associated with its powerful potential, which is capable of reviving everything truly human in every person. In his concept of religion, Fromm puts forward the relationship between religious knowledge and intrapsychological processes, as well as their religious and moral content, through which a person can unite with the world, satisfy his/her creative, positive manifestations and values. According to him, religion has also strongly influenced the culture, preventing the manifestation of unconscious urges.

Գոհար Սարգսյան *– փիլ. գիտ. թեկն., ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ*

Гоар Саргсян *-- канд. фил. наук, доцент кафедры Истории и теории религии ЕГУ Факуль¬тета Богословия*

Gohar Sargsyan *– PhD in Philosophy, Associate professor of chair of History and Theory of Religion*